Խմբի անդամները շուրջ երկու ամիս կմնան Հայաստանում և իրենց մասնագիտական հմտություններով կնպաստեն հիմնականում գրասենյակային տարբեր բնույթի աշխատանքների:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Հունիսի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի ուխտավորներին՝ Սան Ֆրանցիսկոյի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Սարգիս քահանա Պետոյանի գլխավորությամբ: Տ. Սարգիս քահանա Պետոյանի նախաձեռնությամբ նման ուխտագնացությունը, լինելով թվով 9-րդը, ամենամյա բնույթ է կրում:

Նորին Սրբությունը ողջունեց ուխտավորներին և իր ուրախությունը հայտնեց՝ նրանց տեսնելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց Տ. Սարգիս քահանային՝ Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցու համայնքի կայացման գործում ունեցած անգնահատելի ծառայությունների և նման ուխտագնացությունների կազմակերպման հոգեշեն նախաձեռնությունների համար: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ այդ գնահատանքը վերաբերում է նաև այս համայնքին, քանի որ քահանայի երջանկությունը լիարժեք է ժողովրդով, իսկ նման ժողովուրդ ունենալն էլ պայմանավորված է քահանայի աշխատանքով:

Ուխտավորները երկու շաբաթ կմնան Հայաստանում՝ ուխտի մեկնելով տարբեր սրբավայրեր:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Հուլիսի 10-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Այիմդոս Բոզջիգիտովին:

Շնորհավորելով տիար Բոզջիգիտովին նշանակման առիթով՝ Նորին Սրբությունը դեսպանին մաղթեց արդյունավետ գործունեություն իր առաքելության մեջ: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ հաստատեց երկու երկրների հարաբերություններում առկա առաջընթացը և վստահեցրեց, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին շարունակելու է նպաստել երկու ժողովուրդների և երկրների միջև առկա ջերմ կապերի և համագործակցության սերտացմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաև Ղազախստանում պարբերաբար գումարվող համաշխարհային և ավանդական կրոնների հոգևոր առաջնորդնե-

րի գագաթաժողովների կարևոր դերակատարությանը՝ ի դեմս դեսպանի իր գնահատանքը հայտնելով Ղազախստանի իշխանություններին այն վերաբերմունքի և հարգանքի համար, որ ցուցաբերվում է Ղազախստանում կրոնների նկատմամբ, և հասարակության մեջ դրանց առաքելության կարևորման համար:

Հանդիպմանն անդրադարձ եղավ նաև Ղազախստանի հայ համայնքին, մեր երկու երկրների միջև առկա տնտեսական գործակցությանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հուլիսի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «21-րդ դարի մարտահրավերները և հայ երիտասարդությունը» համահայկական երիտասարդական միջազգային խորհրդաժողովի մասնակիցներին:

Տիար Վլադիմիր Աղայանը, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանն ընդունելության համար, Վեհափառ Հայրապետին ներկայացրեց խորհրդաժողովի աշխատանքները և քննարկված հիմնախնդիրները:

Ապա երիտասարդներին Հայրապետական օրհնության և գնահատանքի իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ողջունելով խորհրդաժողովի մասնակիցների այցն ամենայն հայոց հոգևոր կենտրոն՝ Նորին Սրբությունը կարևոր նկատեց երիտասարդության ներգրավվածությունը հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերների լուծման գործում:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ հաստատեց, որ Հովվապետական այցերի ժամանակ աշխարհի տարբեր երկրներում տեսել է նախանձախնդիր հայ երիտասարդություն՝ հետամուտ ազգային խնդիրների լուծմանը: «*Ազգային ոգու վերարթնությունը երաշխիքն է ազգային ինքնության պահպանության*»,- ասաց Գարեգին Բ Կաթողիկոսը՝ առկա հիմնախնդիրների հաղթահարման ճանապարհ նկատելով հոգևոր միասնականությունը, ազգի միաբանությունը և համընդհանուր ջանքերի մեկտեղումը:

Նորին Սրբությունը հորդորեց երիտասարդներին իրենց գիտելիքներն ու կարողություններն ի սպաս դնել հայ ժողովրդի և մեր Հայրենիքի բարգավաճմանը՝ մշտապես հայացքներն ուղղյալ պահելով դեպի Հայրենիք, Արարատ և Սուրբ Էջմիածին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ